ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում անցկացված ուսումնասիրության Զեկույց

Բովանդակություն

Ներածություն----------3

Սոցիալական ծառայությունների տրամադրման իրավաօրենսդրական կարգավորումները----------5

Ուսումնասիրության մեթոդաբանությունը----------9

Ընդհանուր վիճակագրություն----------10

Համայնքահեն աջակցությունը մարզերում----------11

Ծառայություններ մատուցող կազմակերպությունների քարտեզագրում----------20

Եզրակացություններ----------26

Առաջարկություններ----------27

Հավելված----------28

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստորագրելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորություն է ստանձնել աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվելու մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից: Հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել վաղ մանկությունից՝ իրենց ներուժն իրացնելու և հասարակության լիիրավ անդամներ դառնալու հնարավորությունն ապահովելու համար:

Հատուկ կարիքներ ունեցող հազարավոր երեխաներ Հայաստանում մինչ օրս մեկուսացված են իրենց ընտանիքներից, ընկերներից և համայնքներից, և բնակվում են մանկատներում և հատուկ գիշերօթիկ դպրոցներում: Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ ընդհանրապես չեն հաճախում նախակրթարան ու դպրոց և չեն մասնակցում իրենց համայնքի կյանքին: Այդ երեխաների ոչ բավարար սոցիալական ներառվածությունը շարունակում է նպաստել տարանջատվածությանը: Այդուամենայնիվ, Հայաստանում զգալի առաջընթաց է արձանագրվել հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում: Տարեցտարի ավելանում է դպրոցներում ընդգրկվող, բուժօգնություն և վերականգնողական ծառայություններ ստացող երեխաների թիվը: Հասարակական կազմակերպությունները տարաբնույթ ծառայություններ են մատուցում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին և նրանց ծնողներին: Այնուհանդերձ, դեռևս բարելավելու շատ բան կա. հաշմանդամություն ունեցող երեխաները և նրանց ընտանիքներն իրավունք ունեն ստանալու օժանդակություն, որը պետք է համակարգված ծառայությունների միջոցով ողջ կյանքի ընթացքում հասանելի լինի երեխային: Ներառումը հնարավոր է դարձնում նրանց իրավունքների առաջանցիկ խթանումը և պաշտպանությունը:

Հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներն ավելի լավ հոգալու համար առաջին հերթին անհրաժեշտ է տեղյակ լինել նրանց իրավիճակի մանրամասներին, իմանալ՝ արդյոք նրանց հասանելի են ծառայությունները, և արդյոք նրանք կարողանում են ակտիվորեն մասնակցել իրենց համայնքների կյանքին:

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազակերպությունը հանդես է եկել հաշմանդամություն ունեցող երեխաների համար առողջապահական, կրթական և սոցիալական պաշտպանության ծառայությունների հասանելիության վերաբերյալ արժանահավատ տեղեկություններ հավաքելու նախաձեռնությամբ: Ուշադրությունը ծառայությունների հասանելիության ուղղությամբ կենտրոնացնելու տրամաբանական հիմնավորումն այն է, որ ծառայություններն առանցքային նշանակություն ունեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման և կյանքի ցանկալի արդյունքների ապահովման գործում: Կարևոր է իմանալ, թե ինչ ծառայություններ կան հաշմանդամություն ունեցող երեխաների համար մարզերում, արդյոք նրանք կարող են ստանալ այդ ծառայությունները, արդյոք դրանք բավարար են մարզային մակարդակում, և ինչ խոչընդոտներ կան դրանցից օգտվելու ճանապարհին: Ուսումնասիրությունը նպատակ էր հետապնդում նաև ոլորտում նպատակային քաղաքականություն և ծրագրեր մշակելու և իրականացնելու համար, ինչը հնարավորություն կտա վեր հանել միջավայրի և ծառայությունների մատուցման հետ կապված առկա բացերը: Այսպիսով, «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ծրագրի շրջանակներում ԱԶԿ ՀԿ-ն իրականացրել է համայնքահեն աջակցության կենտրոնների ուսումնասիրություն Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում՝ բացահայտելով մարզային աջակցության կենտրոնների տեղակայվածության համաչափությունը, բաշխվածությունը, նրանց կողմից մատուցվող ծառայությունների քանակն ու որակը, կարիքները և բարելավման հիմնական ուղղությունները:

Սոցիալական ծառայությունների տրամադրման իրավաօրենսդրական կարգավորումները

Սոցիալական պաշտպանության համակարգում ընթացող բարեփոխումների համատեքստում թվարկենք այն իրավաօրենսդրական կարգավորումներն ու լուծումները, որոնք էական նշանակություն են ունեցել ժամանակակից սոցիալա-իրավական համակարգի ձևավորման գործում՝

1999 թվականի հունվարի 1-ից ներդրվեց աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը, որով ավելի ծանրակշիռ դարձվեց երեխաների գործոնի դերն ընտանիքի կարիքավորության վերջնական աստիճանի գնահատման ժամանակ: Նույն տարում վերականգնվեցին խնամակալության, հոգաբարձության և որդեգրման հանձնաժողովների աշխատանքները:

Սոցիալական որբության կանխարգելման նպատակով բարեփոխվեց որդեգրման գործընթացը, մշակվեցին որդեգրման գործընթացն ապահովող մի շարք իրավական ակտեր:

2003 թվականին ստեղծվեց տեղեկատվական շտեմարան, որում մուտքագրվեց 2000 թվականից սկսած՝ կենտրոնացված հաշվառման վերցված՝ որդեգրման ենթակա երեխաների, որդեգրողների թեկնածուների, ինչպես նաև որդեգրված երեխաների ու որդեգրողների տվյալները:

2002-2003 թվականներին ընդունվեցին երեխաների իրավունքների պաշտանության բնագավառի կարգավորման համար կարևորագույն նշանակություն ունեցող մի շարք օրենքներ, այդ թվում՝«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (այն հետագայում 6 օրենքներով փոփոխվել և լրացվել է) և ՀՀ քրեական օրենսգիրքը, որոնցով առաջին անգամ սահմանվեցին, համապատասխանաբար, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքները և ձևերը, ինչպես նաև ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները, անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները: 2003 թվականին մշակվեց նաև ՀՀ-ում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը, որը ներառում էր նաև անչափահասների շահագործման խնդիրները:

2004-2016 թվականներին սկիզբ դրվեց երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագրի ընդունմանը: Այս փուլում ընդունվեց 2004-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որի շնորհիվ նախանշվեցին ՀՀ-ում երեխաների նկատմամբ պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, պետական կառավարման համակարգում կյանքի կոչվեց երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը, կատարվեցին երեխաների սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային իրավունքների երաշխավորմանն ուղղված կարևոր օրենսդրական բարեփոխումներ, իրականացվեցին երեխաների տարբեր հիմնախնդիրների լուծմանն ուղղված մի շարք կարևոր ծրագրեր, մասնավորապես՝

2004 թվականին ընդունվեցին ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը, որոնցով, ի թիվս այլնի, համապատասխանաբար, սահմանվեցին երեխաների աշխատանքային իրավունքները, պարտականությունները և երաշխիքները, կարգավորվեցին առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման և տեղավորման, խնամատար ընտանիքին վերաբերող մի շարք հարցեր, սահմանվեցին երեխայի ծննդյան, անվան փոփոխման, հայրության որոշման, որդեգրման, մահվան ակտերի գրանցման հետ կապված հարաբերությունները: Նույն թվականին հաստատվեցին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները:

2005 թվականին ընդունվեցին երեխաների իրավունքներին առնչվող «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը (որը 2014 թվականին համանուն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել), «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (այն 2013 թվականին համանուն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել), «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը:

Նույն տարում սահմանվեցին երեխաների խնամքն իրականացնող հաստատությունների հիմնական տիպերը՝ հստակեցնելով յուրաքանչյուր հաստատությունում երեխաների տեղավորման չափանիշները: 2005-2006 թվականներին Երևանի Աջափնյակ թաղային համայնքում և Գյումրիում ստեղծվեցին Երեխաների սոցիալական հոգածության համայնքային ցերեկային մեկական կենտրոններ:

2006 թվականին հաստատվեցին առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը, որում արտացոլվեցին երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված բարեփոխումների քաղաքականության նպատակները, հիմնական սկզբունքները, այդ թվում՝ երեխայի շահերի առաջնահերթությունը, խտրականության բացառումն ու հավասար հնարավորությունների ընձեռումը, ընտանեկանին մոտ միջավայրի ապահովումը:

2007 թվականին հաստատվեցին մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխաների խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները: 2007 թվականից սկսած՝ իրականացվեցին առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված մի շարք ծրագրեր, մասնավորապես, բնակարանի կարիք ունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և նրանց թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառումը, 17 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների վերակազմավորումը երեխաների խնամքի և պաշտպանության 7 գիշերօթիկ հաստատությունների, Մանկական խնամակալական կազմակերպությունների բեռնաթափման ծրագիրը, Մանկատան չափահաս դարձած սաների բնակարանային ապահովման ծրագիրը և այլն: Նույն տարում ընդունվեց նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այն 2013 թվականին համանուն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել), որով սահմանվեց նաև անչափահասների հետ կապված մի շարք դատավարական առանձնահատուկ ընթացակարգեր:

2008 թվականին հաստատվեցին երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը և խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը:

2010 թվականին հաստատվեցին որդեգրման կարգը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա

քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը։

2011 թվականին հաստատվեց խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը։

2012 թվականին հաստատվեցին ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը։

2013 թվականին մշակվեցին ՀՀ-ում բազմազավակ ընտանիքների աջակցության պետական ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը։

2014 թվականին ընդունվեց Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքը «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեցին հատուկ կատեգորիայի երեխա զոհերի աջակցության հետ կապված հարցերը: Նույն տարում հաստատվեցին նաև ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպելու (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը, ՀՀ պետական մանկատների շրջանավարտներին պետական աջակցության ծրագիրը, ինչպես նաև հավանություն տրվեց երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին։

2015 թվականին սահմանվեցին երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները։

2015 թվականին հաստատվեց Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը։

2016 թվականին հավանություն տրվեց կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին, ինչպես նաև հաստատվեցին կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները։

2016 թվականին հաստատվեց խնամակալոսթյան և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը։

2016 թվականին ձևավորվեց Ազգային մակարդակում աջակցության ցանցը, որին միացան 40-ից ավել կազմակերպություններ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքահեն աջակցության կենտրոնների ուսումնասիրությունն անցկացվել է սոցիոլոգիական կիսաստանդարտացված հարցումների մեթոդի կիրառմամբ: Հարցման են ենթարկվել Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի ընդհանուր թվով 22 համայնքահեն աջակցության կենտրոններ, որոնք մարզերում մատուցում են տարբեր սոցիալական, կրթական և վերականգնողական ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաներին ու նրանց ընտանիքներին: Մարզային աջակցության կենտրոնները բացահայտվել են տարբեր աղբյուրներից՝ պաշտոնապես գրանցված, մարզպետարանների համապատասխան բաժիններում գրացված, սակայն իրականում գործող և ծառայություններ մատուցող կազմակերպությունների ցանկերից: Ուսումնասիրության մեջ ներառված չեն ներառական կրթություն իրականացնող դպրոցները, «Արաբկիր» վերականգնողական կենտրոնի մասնճյուղերը:
Հետազոտության գործիքը կցված է Հավելվածում:

Ըստ այդմ, թիրախ մարզերում դրանց բաշխվածությունը հետևյալն է.

Աղյուսակ 1. Ուսումնասիրված համայնքահեն աջակցության կենտրոնների բաշխվածությունն ըստ մարզերի.

	Մարզ	Հաստատությունների թիվ
1.	Արմավիր	5
2.	Գեղարքունիք	10
3.	Կոտայք	5
4.	Վայոց ձոր	2

Ընդհանուր վիճակագրություն

2018թ. հունվարի 1-ի դրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման տեղեկատվական համակարգում հաշվառված է 193.432 հաշմանդամություն ունեցող անձ, որը կազմում է ՀՀ բնակչության 6.5%: Նրանցից 146.455 հաշմանդամությունը սահմանվել է անժամկետ (75,7%), «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեն 8.233 (4,2%), 18-ից մինչև 40 տարեկան՝ 24.305 (12,6%), 40-ից մինչև կենսաթոշակային տարիքի՝ 88.999 (46,0%), կենսաթոշակային տարիքի և բարձր՝ 71.895 (37,2%)[1]:

Ծրագրի թիրախ չորս մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաների ընդհանուր թիվը 2240 է, որոնցից 714-ը բաժին է ընկնում Արմավիրի մարզին, 681-ը՝ Գեղարքունիքին, 723-ը՝ Կոտայքին, իսկ 122-ը՝ Վայոց ձորին (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը թիրախ մարզերում.

	Մարզ	Հաշմ. ունեցող երեխաների թիվ
1.	Արմավիր	714
2.	Գեղարքունիք	681
3.	Կոտայք	723
4.	Վայոց ձոր	122
	Ընդամենը	***2240***

Չորս մարզերում գործում էին թվով 4 հատուկ ուսումնական հաստատություն՝ մտավոր թերզարգացում ունեցող երեխաների համար: Դրանցից երկուսը գործում էին Արմավիրի մարզում, որոնք արդեն վերակազմակերպվել են և դարձել մանկավարժահոգեբանական աջակցության խմբեր, մեկը՝ Գեղարքունիքի մարզում, մեկը՝ Կոտայքում, իսկ Վայոց ձորում նմանատիպ հատուկ դպրոց չկա:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում, ընդհանուր առմամբ, գործում է 6 մանկատուն, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 4 հաստատություն, սոցիալական հոգածության ցերեկային

[1] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայք՝ http://www.mlsa.am/?p=13855

խնամքի 4 հաստատություն: Ծրագրի թիրախ չորս մարզերից միայն Գեղարքունիքի մարզում է գործում Գավառի մանկատունը, խնամքի ցերեկային ևս 1 կենտրոն կա նորից Գեղարքունիքի մարզում:
Հավելենք նաև, որ ներառական կրթության համակարգը չի ներդրվել նախակրթարաններում՝ մանկապարտեզներում, ինչը դեռ վաղ տարիքից մեկուսացնում է հաշմանդամություն ունեցող երեխային և ավելի խոչընդոտում նրա մուտքը հանրակրթական հաստատություններ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ (ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆ) ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Նկատի ունենալով, որ համայնքը, հանդիսանալով երեխայի միկրոմիջավայրը, կարևոր դեր է խաղում նրա զարգացման և սոցիալականացման համար, պետք է բոլոր անհրաժեշտ ծառայությունները մատուցի երեխային: Համայնքահեն ծառայությունները ավելի հասանելի են երեխաներին, թույլ են տալիս ավելի ճկուն և անհատական կարիքների վրա հիմնված մոտեցում ցույց տալ նրանց: Հայաստանում համայնքահեն ծառայությունների տարածվածությունը և գործունեության շրջանակը դեռևս բավականին սահմանափակ է: Այս բաժինն անդրադառնում է ծրագրի թիրախ չորս մարզերում տարբեր կազմակերպությունների կողմից ցուցաբերած աջակցությանը:

Հաշմանդամություն ունեցող երեխաների 7%-ը հաճախում է ցերեկային խնամքի կենտրոններ: Երևան քաղաքում հաճախումն ամենաբարձրն է՝ 10%: Ըստ սեռի տարբերություններ գրեթե չկան:
Հաշմանդամություն ունեցող երեխաների հաճախելիությունը ցերեկային խնամքի կենտրոններ տարբերվում է ըստ մարզերի: Թիրախ մարզերում այն հետևյալն է.

- Արմավիր՝ 9 տոկոս,
- Գեղարքունիք՝ 9 տոկոս,
- Կոտայք՝ 1 տոկոս,
- Վայոց Ձոր՝ 1 տոկոս:

Պարզվում է, որ մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաներին տարբեր տիպի ծառայություններ մատուցվում են հիմնականում տեղական հասարակական

կազմակերպությունների կողմից այս կամ այն ծրագրերի շրջանակներում՝ այս կամ այն դոնորների ֆինանսավորմամբ:

Կազմակերպությունները մատուցում են հիմնականում խորհրդատվության և ուղղորդման ծառայություններ, սոցիալական ներառման և կրթական ծառայություններ: Դրանք առավել մանրամասն երևում են գծապատկեր 1-ում.

Գծապատկեր 1. Հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների տեսակները թիրախ 4 մարզերում/թիվ.



Մատուցվող ծառայությունների տարբեր կերպ են բաշխված թիրախ մարզերում.

Գծապատկեր 1. 1 Հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների տեսակները Արմավիրի մարզում/թիվ.



Գծապատկեր 1. 2 Հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների տեսակները Գեղարքունիքի մարզում/թիվ.



Գծապատկեր 1. 3 Հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների տեսակները Կոտայքի մարզում/թիվ.



Գծապատկեր 1. 3 Հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների տեսակները Կոտայքի մարզում/թիվ.



Մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաներին ծառայությունները մատուցվում են անվճար հիմունքներով: Այդպես են պատասխանել հարցված կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը:

Տարեկան կտրվածքով ծառայություններ են մատուցվում ընդհանուր թվով 3596 երեխայի, որը սակայն հնարավոր չէր ստանալ բացարձակ երեխաների թվով, քանի որ նույն երեխան հնարավոր է նույն տարվա ընթացքում ծառայություն է ստացել մեկից ավել կազմակերպությունում: Նրանց բաշխվածությունը հետևյալն է ըստ մարզերի.

- Արմավիր – 575 երեխա,
- Գեղարքունիք – 2522 երեխա,
- Կոտայք – 429 երեխա,
- Վայոց ձոր – 70 երեխա:

Ուսումնասիրված կազմակերպությունները տարբեր կերպ են գնահատել իրենց կողմից մատուցվող ծառայություններն ըստ տարբեր չափանիշների:

Աղյուսակ 3. Կազմակերպությունների գնահատումը ըստ հետևյալ չափանիշների/թիվ.

	1 շատ վատ	2 վատ	3 Բավ.	4 լավ	5 շատ լավ
Տարածքը, սենյակների թիվը՝ շահառուների թվի համեմատ	1	2	8	6	5
Շենքային պայմանների հարմարեցվածությունը	1	3	7	5	6
Անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով հագեցվածությունը		3	6	7	6
Անհրաժեշտ մանագետների բավարար քանակով հագեցվածությունը		2	7	9	4
Մասնագետների գնահատում /մասնագիտական կարողություններ, հմտություններ/			6	7	9

Ինչպես երևում է աղյուսակից սոցիալական ծառայություններ մատուցող մարզային կազմակերպություններում ամենից լավ գնահատվել է մասնագիտական կարողությունները. հարցված 22 կազմակերպություններից՝

- 9-ը «շատ լավ» է գնահատել իր կազմակերպության մասնագիտական կարողություններն ու հմտությունները,

- նրանցից 9-ը «լավ» է գնահատել անհրաժեշտ մասնագետների բավարար քանակով հագեցվածությունը,
- 7-ը «լավ» է գնահատել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով հագեցվածությունը։

Փաստորեն ավելի վատ է մարզային կազմակերպությունների շենքային պայմաններն ու տարածքը։ Ըստ այդմ՝

- նրանցից 8-ը «բավարար» է գնահատել տարածքը, սենյակների թիվը՝ շահառուների թվի համեմատ, և
- 7-ն էլ կրկին «բավարար» է գնահատել շենքային պայմանների հարմարեցվածությունը։

Մարզային առումով էական տարբերություններ չկային գնահատականների մեջ. մի փոքր առավել դրական էին գնահատել Կոտայքի ծառայություն մատուցող կազմակերպությունները։

Հաջորդ հարցը վերաբերում էր, թե որքանով է հասանելի կազմակերպության/կենտրոնի տեղակայումը շահառուների համար։ Ըստ էության հասանելիության առումով հիմնականում ծառայությունների մատուցման վայրը հասանելի է շահառուների համար։ Պատասխանները հավասարապես են բաշխվել երկու հիմնական տարբերակների միջև՝ *«կենտրոնը մասնակի է հոգում շահառուների տեղափոխումը»* և *«շահառուներն իրենք են գալիս կենտրոն»*։ Կազմակերպություններից միայն 3-ն են ամբողջովին հոգում շահառուների տեղափոխումը, և ևս 3-ը նշել է, որ «շահառուների համար որոշ չափով դժվար է հասնել կենտրոն»։

Համարվելով սուբյեկտիվ ցուցանիշ՝ այնուամենայնիվ, կազմակերպություններից փորձ արվեց պարզելու, թե իրենց շահառուները բավարարված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից, թե ոչ, որը երևում է գծապատկեր 2-ում։

Գծապատկեր 2. Շահառուների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից/տոսկոս.



Ինչպես երևում է գծապատկերից կազմակերպությունների մեծամասնության կարծիքով իրենց կողմից մատուցվող ծառայություններից իրենց շահառուները լիովին կամ հիմնականում բավարարված են: Նրանց մեջ մեծամասնություն են կազմում Կոտայքի և Գեղարքունիքի ծառայություն մատուցող համայնքային կազմակերպությունները:

Հետաքրքիր էր պարզել նաև, թե ըստ հարցված կազմակերպությունների, ուրիշ ինչ ծառայությունների կարիք ունեն իրենց շահառուները: Դրանք բավականին բազմազան են, որոնց մեջ, սակայն, առաջին տեղում մարդասիրական օգնությունն է՝ սնունդ, հագուստ և այլն: Առավել մանրամասն ներկայացված է գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Այլ ծառայությունների ստացման շահառուների կարիքները/թիվ.



Մարզային կտրվածքով կրկին մի փոքր տարբերվում էին Կոտայքի ծառայություն մատուցողները. վերջիններիս կարծիքով իրենց շահառուներն ավելի շատ կարիք ունեն ֆիզիոթերապիայի, իսկ մյուս 3 մարզերի ծառայություն ստացող շահառուներն ավելի շատ կարիք ունեն մարդասիրական օգնության՝ սնունդ, հագուստ և այլն։

Հետաքրքիր էր իմանալ նաև, թե համայնքային աջակցության կենտրոններն ինչպես են գնահատում իրենց մարզում նմանատիպ կազմակերպություններով հագեցվածությունը, թե բավարար են արդյոք դրանք թիրախ խմբին ծառայություններ մատուցելու առումով։ Պարզվում է, որ հարցված կազմակերպությունների մեծամասնության կարծիքով ծառայություններ մատուցող կենտրոններն իրենց մարզում «ավելի շուտ բավարար չեն» (Արմավիր, Կոտայք) կամ «բոլորովին բավարար չեն» (Գեղարքունիք, Վայոց ձոր).

- լիովին բավարար են - 1 կազմակերպություն,
- հիմնականում բավարար են - 2 կազմակերպություն,
- ավելի շուտ բավարար չեն - 8 կազմակերպություն,
- բոլորովին բավարար չեն - 9 կազմակերպություն,
- դժվարանում եմ պատասխանել - 2 կազմակերպություն։

Այսպիսով, նույնիսկ ծառայություն մատուցողների և ոչ թե ստացողների գնահատմամբ ակնհայտ է, որ թիրախ մարզերում համայնքային սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունները բավարար չեն թիրախ սոցիալական խմբերին ծառայություններ մատուցելու առումով։

Եվ, վերջապես, հարց ուղղվեց համայնքային կազմակերպություններին՝ պարզելու, թե ինչ ռեսուրսների կարիք ունեն նրանք։ Բնականաբար, կարիքների առանցքում ֆինանսական միջոցներն են և կենտրոնների գործարկման ֆինանսական կայունությունը։ Մարզային առանձնահատկություններ չկան կարիքների առաջնահերթություններում։

Գծապատկեր 4-ը ներկայացնում է կազմակերպությունների կարիքների առաջնահերթությունը.

Գծապատկեր 4. Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կարիքները/թիվ.



Իսկ թե ինչ են նախատեսում անել հարցված կազմակերպությունները մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն ուղղված, ներկայացված է ստորև՝ խմբավորված տեսքով.

- Ֆինանսական կայունությանն ուղղված քայլերի իրականացում, տարբեր դոնորներին ուղղված ծրագիր առաջարկների ներկայացում,
- Մասնագիտական կողմնորոշում շահառուներին, անկախ կյանքի հմտությունների ուսուցում,
- Զարգացնող, դիդակտիկ նյութերի ձեռքբերում, մասնագետների վերապատրաստում, համագործակցություն կազմակերպությունների հետ,
- Ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում,
- Փորձի փոխանակման այցերի կազմակերպում, դրական փորձի կիրառում համայնքներում,
- Վերականգնողական կենտրոնների հիմնում Մարտունիում և Ճամբարակում, ցերեկային խնամքի կենտրոնի հինում Վայոց Ձորում,
- Արհեստագործական խմբակների զարգացում, 18 տարեկանից բարձր շահառուների զբաղվածության ապահովում:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաներին տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպությունների քարտեզագրման նպատակն է առավել լիարժեք տեղեկատվություն և պատկեր ունենալ չորս մարզերում տարբեր կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների մասին, որոնք աջակցություն են տրամադրում հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքների անդամներին:

Զեկույցի այս հատվածում ամփոփված են հաշմանդամություն ունեցող երեխաներին և ընտանիքներին կոնկրետ ծառայություններ մատուցող պետական, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և այլ կազմակերպությունների տվյալներ թիրախ չորս մարզերում, որոնցում ներառված չեն մարզպետարանների համապատասխան վարչություններն ու սոցիալական ծառայությունների ստորաբաժանումները, ներառական դպրոցներն ու բժշկական կազմակերպությունները: Կազմակերպությունների ցանկը կարող է չլինել սպառիչ, ինչպես նաև հնարավոր է ծառայությունների բնույթի փոփոխություն, որոնք տեղի են ունեցել հարցումներն իրականացնելուց հետո:

Ուսումնասիրելով թիրախ մարզերում գործող երեխաներին ծառայություններ մատուցող կազմակերպությունների ցանկը՝ կարելի է եզրակացնել, որ հաշմանդամություն ունեցող երեխաների համար բազմամասնագիտական աջակցություն տրամադրող կազմակերպությունները քիչ են, ոչ հավասարապես բաշխված, դրանք հիմնականում տրամադրում են որոշակի ոլորտներում:
Ստորև ներկայացված են Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաներին սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների և կենտրոնների ցանկը:

Ծառայություն մատուցող կազմակերպությունների ցանկ

Արմավիրի մարզ

1. «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն, «Արևածագ» երեխաների աջակցության կենտրոն
Ղեկավար՝ Նաիրա Առաքելյան
Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Երևանյան 40ա
Հեռ. 094 55 20 39, 094 50 20 39,
Էլ.փոստ՝ sunrisearmavir@gmail.com info@armavirdc.org
Կայք՝ www.armavirdc.org
Գործունեության ոլորտը՝ Սոցիալական և վերականգնողական ծառայությունների մատուցում հաշմանդամություն ունեցող երեխաներին

2. «Արմավիրի մայրության օրրան» ՀԿ
Ղեկավար՝ Ալինա Արտաշեսյան
Հասցե՝ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, թիվ 2 մանկապարտեզ
Հեռ. 093 37 19 87
Գործունեության ոլորտ՝ աջակցություն բազմազավակ ընտանիքներին

3. «Ընտանիք և համայնք» ՀԿ
Ղեկավար՝ Քնարիկ Գարանֆիլյան
Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր
Հեռ. 093 63 19 70,
Էլ.փոստ՝ familyandcomm@gmail.com
Գործունեության ոլորտ՝ աջակցություն կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաներին, խոցելի ընտանիքներին

4. «Հույսի Մեծամոր» ՀԿ
Ղեկավար՝ Մարգարիտ Սեդրակյան
Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, թիվ 2 մանկապարտեզ
Հեռ. 077 90 11 88
Էլ.փոստ՝ huysimetsamor@yahoo.com
Գործունեության ոլորտ՝ աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին, հաշմանդամ երեխաների ծնողների կրթություն, ծնողական փոխօգնության խմբերի ստեղծում և նրանց կարողությունների հզորացում

5. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ
Ղեկավար՝ Կարեն Նազարյան
Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռ. 010 517 157, Էլ.փոստ՝ info@roundtable-act.am
Կայք՝ http://www.roundtable-act.am
Գործունեության ոլորտ՝ սոցիալական, կրթական ծառայությունների մատուցում սոցիալապես անապահով ընտանիքներին ու երեխաներին, համայնքային զարգացում

6. «Հայ Միասնության Խաչ» բարեգործական ՀԿ
Ղեկավար՝ Նարինե Ավետիսյան
Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Շահումյան 36
Հեռ. 0231 4 56 10, 093 78 16 89
Էլ.փոստ՝ info@cau.am , Կայք՝ www.cau.am
Գործունեության ոլորտ՝ կրթական, մշակութային և սոցիալական ծառայությունների մատուցում խոցելի խմբերին ու երեխաներին

7. «Հայաստանի մանուկներ» հիմնադրամ /Արմավիրի մարզ, Բաղրամյանի տարածաշրջան
Երեխաների և ընտանիքների աջակցության ծրագրերի ղեկավար՝ Լուսինե Սաղումյան
Հեռ. 093 25 88 55, 010 50 20 76
Գործունեության ոլորտ՝ աջակցություն գյուղական համայնքների զարգացմանը, ենթակառուցվածքների բարելավմանը՝ առողջապահական, սոցիալական և կրթական ծրագրերի իրականացմամբ:

Գեղարքունիքի մարզ

1. «Աստղավարդ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
Ղեկավար՝ Մելանյա Եփրեմյան
Հասցե՝ ՀՀ Գեղարքունքի մարզ, ք. Վարդենիս, Իսահակյան 7
Հեռ. 0269 2 4154, 093 46 27 06
Էլ.փոստ՝ astghavard@ngoc.am
Գործունեության ոլորտը՝ աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին ու նրանց ընտանիքներին:

2. «Աստղացոլք» ՀԿ
Ղեկավար՝ Իրինա Հովհաննիսյան
Հասցե՝ ՀՀ Գեղարքունքի մարզ, ք. Ճամբարակ, Գետափնյա փողոց 37
Հեռ. 0265 2 32 11, 093 07 60 07
Էլ.փոստ՝ i.hovhan@gmail.com
Գործունեության ոլորտը՝ աջակցություն երեխաների և երիտասարդների

կյանքի որակի բարելավմանը՝ շահերի պաշտպանության, կրթական, սոցիալական, տնտեսական զարգացմանն ուղղված գործունեության միջոցով:

3. «Արտիսիմո» մշակութային ՀԿ
Ղեկավար՝ Էկա Հորստկա
Հասցե՝ ք.Մարտունի, Մյասնիկյան 23, ք. Մարտունի, Գ.Նժդեհի 14
Հեռ.՝093 31 73 31
Էլ. փոստ՝ artissimongo@gmail.com
Գործունեության ոլորտը՝ մշակույթ, սոց աշխատանք,ԿԱՊԿՈՒ երեխաներ

4. «Արևշատ» հատուկ կարիքներ ունեցող երեխաների զարգացման հիմնադրամ
Ղեկավար՝ Արփինե Արևշատյան
Հասցե՝ ք. Գավառ, Գ. Լուսավորիչ 14/20
Հեռ.՝ 094 65 03 55
Էլ. փոստ՝ arpine@lotsofsun.org
Գործունեության ոլորտը՝ Բարեգործական

5. «Բարի Հույս» սոցիալական, հաշմանդամ երեխաների առողջությանն աջակցող ՀԿ
Ղեկավար՝ Մնացական Սարգսյան
Հասցե՝ ՀՀ Գեղարքունքի մարզ, ք. Գավառ, Շահումյան 11
Հեռ. 0264 2 27 28, 093 805775
Էլ.փոստ՝ barihuys@mail.ru
Գործունեության ոլորտը՝ աջակցություն Գեղարքունիքի մարզի հատուկ կարիքներով երեխաների առողջապահական, սոցիալական և կրթական խնդիրների լուծմանը:

6. Գավառի հատուկ դպրոց
Ղեկավար՝ Լարիսա Զազյան
Հասցե՝ ք. Գավառ Միքայելյան 33
Հեռ.՝091 14 66 77, 0264 2 43 08
Էլ. փոստ՝ gavar1htd@schools.am
Կայք՝ http://gavar1htd.schoolsite.am
Գործունեության ոլորտը՝ ուսումնադաստիարակչական, խնամք

7. Գավառի Մանկատուն
Ղեկավար՝ Նիկոլայ Նալբանդյան
Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Օգոստոսի 23-ի փողոց, շենք 106
Հեռ.՝ 0264 2 23 50

Էլ. փոստ՝ gavarimankatun@rambler.ru
Գործունեության ոլորտը՝ երեխաների շուրջօրյա խնամք

8. «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ
Ղեկավար՝ Գագիկ Տարասյան
Հասցե՝ ՀՀ Գեղարքունքի մարզ, ք. Գավառ, Արծրունի եղբ. փ., տուն 45, Շիրակի մարզ, ք. Գյումրի 3118, Հ. Սարգսյան փ., նրբանցք 3, տ.8,
Հեռ. 0264 3 02 12, 0312 5 72 01
Էլ.փոստ՝ info@caritas.am , caritas@caritasarmenia.org
Կայք՝ www.caritas.am
Գործունեության ոլորտը՝ երեխաների սոցիալական պաշտպանություն, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում

9. «Սոցիալական երկխոսություն» սոցիալական ՀԿ
Ղեկավար՝ Մարիամ Համբարձումյան
Հասցե՝ ք. Գավառ, Բոշնաղլյան 19
Հեռ.՝ 093 31 74 04
Էլ. փոստ՝ mariam.hambarcumyan@mail.ru
Գործունեության ոլորտը՝ Սոցիալական ոլորտ, ցերեկային կենտրոն

10. «Տաթև» ՀԿ
Ղեկավար՝ Տաթևիկ Գրիգորյան
Հասցե՝ ք. Մարտունի, Երևանյան 42, բն35
Հեռ.՝ 091 91 12 57
Էլ. փոստ՝
Գործունեության ոլորտը՝ մարզական- մշակութային, սոցիալական ներառում

Կոտայքի մարզ

1. «Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց»
Ղեկավար՝ Տաթևիկ Շիրինյան
Հասցե՝ ք. Աբովյան, Սարալանջ
Հեռ.՝ 0222 2 01 80,
Էլ. փոստ՝ abovyan1sp@schools.am
Գործունեության ոլորտը՝ հանրակրթական, սոցիալական, խնամք

2. Հրազդանի «Երեխայի և Ընտանիքի Զարգացման Կենտրոն»
Ղեկավար՝ Մարինե Եգորյան

Հասցե՝ ք. Հրազդան
Հեռ.՝ 093 11 79 72, 093 48 00 85,
Էլ. փոստ՝ familyngo@gmail.com egoryan83@mail.ru
Գործունեության ոլորտը՝ կրթական համակարգի զարգացում, սոցիալ-հոգեբանական աջակցություն, ընտանիքների իրազեկվածություն՝ ապագայի և հնարավորությունների մասին:

3. Հրազդանի երեխաների աջակցության հիմնադրամ
Ղեկավար՝ Կամո Առաքելյան
Հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս թիվ 16 մանկապարտեզ
Հեռ.՝ 0222 6 30 88, 093 89 42 76
Էլ. փոստ՝ childfund@mail.ru hrazdan@mail.ru
Գործունեության ոլորտը՝ միակողմանի և եկողմանի ծնողազուրկ երեխաներ, չքավոր ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձիք, թափառաշրջիկներ, շնորհալի, տաղանդավոր բացառիկ օժտվածությամբ երեխաների սոցիալական ծառայությունների տրամադրում

4. Չարենցավանի «Ռեսուրս կենտրոն » ԲՀԿ
Ղեկավար՝ Գայանե Գրիգորյան
Հասցե՝ ք. Չարենցավան, Օղակային 14
Հեռ.՝ 093 96 91 09
Էլ. փոստ՝ rc.charentsavan@rambler.ru
Գործունեության ոլորտը՝ սոցիալ-խորհրդատվական և ուղղորդման ծառայություններ, սոցիալական ներառում

5. Չարենցավան Համայնքային զարգացման կենտրոն ՀԿ
Ղեկավար՝ Մնացական Պողոսյան
Հասցե՝ ք. Չարենցավան, Օղակային 14
Հեռ.՝ 093 62 78 81
Էլ. փոստ՝ rc.charentsavan@rambler.ru
Գործունեության ոլորտը՝ Հաշմանդամների սոցիալ- վերականգնողական աջակցություն, հատուկ կարիքներ ունեցող մարդկանց ինտեգրում, իրավունքների պաշտպանություն, աջակցություն

Վայոց Ձորի մարզ

1. «Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Ղեկավար՝ Էդուարդ Բագրատունի
Հասցե՝ ք.Եղեգնաձոր, Նարեկացի 7
Հեռ.՝ 077 06 24 66,
Էլ. փոստ՝ eduardbagratuny@gmail.com
Գործունեության ոլորտը՝ սոցիալական, կրթական, ուղղորդման ծառայություններ

2. «Հայկական կարմիր խաչի» Վայոց Ձորի մ/ճ
Ղեկավար՝ Էդուարդ Բագրատունի
Հասցե՝ ք.Եղեգնաձոր, Շահումյան 1
Հեռ.՝ 094 73 33 51,
Էլ. փոստ՝ vayotsdzorredcross@mail.ru
Գործունեության ոլորտը՝ խնդիրներով երեխաների հետ կրթական աշխատանքներ, սոցիալական աջակցություն, բնաիրային օգնություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայաստանում համայնքահեն ծառայությունների տարածվածությունը և գործունեության շրջանակը դեռևս բավականին սահմանափակ է:
- Սոցիալական ծառայություններ մատուցող կենտրոններն անհավասարաչափ են բաշխված ըստ կարիքների և մարզերի:
- Սոցիալական ծառայություններ մատուցող կենտրոնները չունեն միատեսակ մոդել և նրանց կողմից չեն կիրառվում միասնական չափորոշիչներ և այս ուղղությամբ պետության կողմից առկա է թույլ վերահսկողություն, որն էլ հանգեցնում է շահառուների վնասմանը:
- Մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաներին տարբեր տիպի ծառայություններ մատուցվում են հիմնականում տեղական հասարակական կազմակերպությունների կողմից այս կամ այն ծրագրերի շրջանակներում՝ այս կամ այն դոնորների ֆինանսավորմամբ:
- Կազմակերպությունները մատուցում են հիմնականում խորհրդատվության և ուղղորդման ծառայություններ, սոցիալական ներառման և կրթական ծառայություններ:
- Մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաներին ծառայությունները մատուցվում են անվճար հիմունքներով:
- Սոցիալական ծառայություններ մատուցող մարզային կազմակերպություններում ամենից լավ գնահատվել է մասնագիտական կարողությունները և ավելի վատ՝ շենքային պայմաններն ու տարածքը: Հասանելիության առումով հիմնականում ծառայությունների մատուցման վայրը հասանելի է շահառուների համար:
- Հարցված կազմակերպությունների շահառուների կարիքները բազմազան են, առաջին տեղում մարդասիրական օգնությունն է՝ սնունդ, հագուստ, այնուհետև՝ ֆիզիոթերապիա, արտ թերապիա և այլն:
- Թիրախ մարզերում համայնքային սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունները բավարար չեն թիրախ սոցիալական խմբերին ծառայություններ մատուցելու առումով:
- Համայնքային կազմակերպությունների կարիքների առանցքում ֆինանսական միջոցներն են և կենտրոնների գործարկման ֆինանսական կայունությունը:

- Մատուցվող ծառայությունների որակը բարելավելու համար համայնքային կազմակերպությունները նախատեսում են ֆինանսական կայունությանն ուղղված քայլեր ձեռնարկել՝ տարբեր դոնորներին ուղղված ծրագիր առաջարկների ներկայացում, մասնագետների պարբերաբար վերապատրաստումներ իրականացնել, վերցնել դրական փորձը, իրականացնել մասնագիտական կողմնորոշում շահառուներին, անկախ կյանքի հմտությունների ուսուցում, ինչպես նաև վերականգնողական կենտրոնների հիմնում Մարտունիում և Ճամբարակում, ցերեկային խնամքի կենտրոնի հինում Վայոց Ձորում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակել և սահմանել հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների միասնական չափորոշիչներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ներգրավելով ոլորտային կազմակերպություններին:
- Տարածաշրջանային կարիքների գնահատման հիման վրա յուրաքանչյուր մարզում ստեղծել/հիմնել համապատասխան քանակով սոցիալական աջակցության կենտրոններ, նվազագույնը՝ մեկ կենտրոն:
- Կատարել սոցիալական աջակցության կենտրոնի գործարկման ֆինանսական հաշվարկ՝ հասկանալու համար, թե որքան է անհրաժեշտ պայմաններ ապահովելու և արդյունավետ ծառայություններ մատուցել հաշմանդամություն ունեցող երեխաներին: Ապահովել տրանսպորտի անհրաժեշտություն ունեցող երեխաների ծախսերը՝ գումարը ծնողներին փոխանցելու միջոցով:
- Ստեղծել հաշմանդամություն ունեցող երեխաների միասնական տվյալների բազա, և ընդհանրական տվյալները հասանելի դարձնել ոլորտային կազմակերպությունների և հետազոտողների համար:
- Ակտիվացնել մարզային մակարդակում ծառայություններ մատուցող կազմակերպությունների համագործակցությունը՝ նվազեցնելով իրարից անկախ և անջատ գործելու ու ծառայություններ մատուցելու սկզբունքը:
- Հաջողված համայնքային աջակցության կենտրոնների փորձը տարածել վերապատրաստումների, փոխադարձ այցերի, խորհրդատվության միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ուսումնասիրության և քարտեզագրման

Հարցաթերթ

Սույն հարցումն իրականացվում է «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի կողմից «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ծրագրի շրջանակներում: Հարցումը նպատակ ունի ուսումնասիրել մարզային աջակցության կենտրոնների տեղակայվածության համաչափությունը, բաշխվածությունը, նրանց կողմից մատուցվող ծառայությունների քանակն ու որակը, կարիքները և բարելավման հիմնական ուղղությունները:
Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

1. **Կազմակերպության անվանումը.** _____

2. **Կազմակերպության տեսակը.**
   - ☐ Տեղական
   - ☐ Պետական
   - ☐ Միջազգային
   - ☐ Այլ ----------

3. **Կազմակերպության կազմակերպաիրավական տեսակը**.
   - ☐ ՀԿ
   - ☐ Հիմնադրամ
   - ☐ ՊՈԱԿ
   - ☐ ՀՈԱԿ
   - ☐ Իրավաբանական անձանց միություն
   - ☐ Այլ ----------

4. **Գործունեության ոլորտները** *(օրինակ՝ հաշմանդամ երեխաների խնամք)*
_____
_____
_____

5. **Կազմակերպության հասցեն** *(գլխավոր գրասենյակի գտնվելու վայրը՝ մարզ, գաղաք/գյուղ/համայնք, փողոց, շենք/բնակարան/տուն)*
_____
_____
_____

6. **Կոնտակտային ինֆորմացիա** *(հեռախոսահամար/ներ/, էլ. փոստի հասցե, կայք՝ առկայության դեպքում)* _____

_____

7. **Կազմակերպության մասնաճյուղերի հասցեներ** *(առկայության դեպքում)*

_____

_____

_____

8. **Կազմակերպության մատուցած սոցիալական ծառայությունների տեսակները** *(կարող եք նշել մեկից ավելի տարբերակներ).*

- ☐ Խորհրդատվություն և ուղղորդում
- ☐ Պրոտեզաօրթպեդիկ օժանդակ սարքերի տրամադրում
- ☐ Բժշկական ծառայություններ
- ☐ Վերականգնողական ծառայություններ
- ☐ Կրթական ծառայություններ
- ☐ Խնամքի ծառայություններ
- ☐ Սոցիալական ներառման ծառայություններ
- ☐ Բնաիրային օգնություն
- ☐ Այլ _____

9. **Ո՞ր մարզերում եք մատուցում սոցիալական ծառայություններ**

- ☐ Երևան
- ☐ Արարատ
- ☐ Կոտայք
- ☐ Արմավիր
- ☐ Արագածոտն
- ☐ Գեղարքունիք
- ☐ Շիրակ
- ☐ Լոռի
- ☐ Տավուշ
- ☐ Սյունիք
- ☐ Վայոց Ձոր

10. **Նշված մարզերի որ քաղաքներում, գյուղերում կամ համայնքներում եք մատուցում ծառայություններ** *(նշել այն դեպքում, եթե ամբողջ մարզը չի ներառում)*

_____

_____

_____

11. **Ի՞նչ հիմունքներով եք ծառայություններ մատուցում**

- ☐ անվճար
- ☐ վճարովի
- ☐ թե՛ անվճար, թե՛ վճարովի

12. Կազմակերպության կողմից տարեկան կտրվածով սոցիալական ծառայություններ ստացող երեխաների մոտավոր թիվը _____

13. Խնդրում եմ գնահատեք ձեր կազմակերպությունը/կենտրոնը 1-5 բալանոց համակարգով /համապատասխան վանդակում դնել ✓ նշանը/

	1 շատ վատ	2 վատ	3 Բավ.	4 լավ	5 շատ լավ	Դժվ. պատ.
Տարածքը, սենյակների թիվը՝ շահառուների թվի համեմատ						
Շենքային պայմանների հարմարեցվածությունը						
Անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով հագեցվածությունը						
Անհրաժեշտ մանագետների բավարար քանակով հագեցվածությունը						
Մասնագետների գնահատում /մասնագիտական կարողություններ, հմտություններ/						

14. Որքանո՞վ է հասանելի ձեր կազմակերպության/կենտրոնի տեղակայումը ձեր շահառուների համար/տրանսպորտայինառումով:

- ☐ կենտրոնն ամբողջովին հոգում է շահառուների տեղափոխումը
- ☐ կենտրոնը մասնակի է հոգում շահառուների տեղափոխումը
- ☐ շահառուներն իրենք են գալիս և չեն դժգոհում
- ☐ շահառուների համար որոշ չափով դժվար է հասնել կենտրոն
- ☐ շահառուների համար շատ դժվար է հասնել կենտրոն/*ինչու՞----պարզաբանել*
- ☐ կիրառելի չի մեր կենտրոնի համար/*ինչու՞---պարզաբանել*

15. Ըստ Ձեզ, ձեր շահառուները հիմնականում բավարարվա՞ծ են ձեր կազմակերպության/կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններից:

- ☐ լիովին բավարարված են
- ☐ հիմնականում բավարարված են
- ☐ ավելի շուտ բավարարված չեն
- ☐ բոլորովին բավարարված չեն
- ☐ դժվարանում եմ պատասխանել

16. Ձեր կարծիքով, ձեր շահառուներն ուրիշ ի՞նչ ծառայությունների կարիք ունեն:

- ☐ արհեստագործական խմբակներ
- ☐ զարգացման տարբեր պարապմունքներ
- ☐ համակարգչային դասընթացներ
- ☐ արտ թերապիա/նկարչություն, խեցեգործություն, կավագործություն
- ☐ երաժշտական թերապիա

- ☐ հոգեբանական աջակցություն, խորհրդատվություն
- ☐ բժշկական ծառայություններ
- ☐ ֆիզիոթերապիա
- ☐ լոգոպեդիա
- ☐ մարդասիրական օգնություն/սնունդ, հագուստ…
- ☐ այլ ----/*նշել*

17. Ըստ Ձեզ, ձեր մարզում բավարա՞ր են նմանատիպ կազմակերպությունները/ կենտրոնները թիրախ խմբին ծառայություններ մատուցելու առումով:

- ☐ լիովին բավարար են
- ☐ հիմնականում բավարար են
- ☐ ավելի շուտ բավարար չեն
- ☐ բոլորովին բավարար չեն
- ☐ դժվարանում եմ պատասխանել

18. Ձեր կազմակերպությունը/կենտրոնը ավելի շատ ի՞նչ ռեսուրսների կարիք ունի:

- ☐ տարածքի/սենյակների թիվ
- ☐ մասնագետների/կենկրետ մասնագետներ, որ չունենք
- ☐ մասնագետների կարողությունների զարգացման
- ☐ ֆինանսական/վարչական և պահպանման ծախսեր
- ☐ ֆինանսական/վարչական, պահպանման, աշխատակազմ
- ☐ տրանսպորտային միջոցի
- ☐ այլ-----/*նշել*

19. Նշեք, խնդրեմ, Ձեր կազմակերպության/կոնտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն ուղղված հիմնական քայլերը/ի՞նչ եք անում կամ նախատեսում եք անել:

_____

_____

_____

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՀ ԱՍՀՆ - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն

ԱԶԿ - Արմավիրի զարգացման կենտրոն

ՀԿ- Հասարակական կազմակերպություն

ԲՀԿ- Բարեգործական հասարակական կազմակերպություն

ՊՈԱԿ- Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀՈԱԿ- Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն